

Letter # 2

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՎԵՅԱՍՏԱՆԵԿՅՑ ԿՈՒԷԲԵԼԿԿՆ ԵԿԵՂԵՑԻ
ՄԵՏԱԿՈՒՅՆ ԴՈՍԹՈՒՄ

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

145 BRATTLE STREET • CAMBRIDGE, MASSACHUSETTS 02138 • TEL: 354-0632

REVEREND FATHER MAMPRE KOUZOUIAN
(Pastor)

Յուլիս 10, 1980

Սիրելի ծխականներ,

Ասիկա երկրորդ նամակն է, զոր Ս.Եկեղեցւոյ Հոգեւոր Հովին ու ծխական խորհուրդը կ'ուղղեն ձեզի: Նամակին նպատակն է բացատրութիւն տալ Եկեղեցւոյ կողմէ ծրագրուած Տնտեսութեան - Սթուլըթշիփ - փրոկրէմի մասին, որ սկիզբ պիտի առնէ յառաջիկայ Սեպտեմբերին - 1980:

Գլխաւորաբար Տնտեսութեան փրոկրէմին միջոցաւ է որ կարելի պիտի ըլլայ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ տարեկան եկամուտը ապահովել: Տարուան սկիզբը ձեր ըրած խոստումները պիտի սահմանեն եկեղեցւոյ տարեկան պիւտճէն: Այսպիսով կարելի պիտի ըլլայ կանխաւ գուշակել եկեղեցւոյ տարեկան եկամուտը, որպէս զի քայլ պահուի դրամաճումի հետեւանքով յառաջացած ծախքերուն հետ:

Տնտեսութեան փրոկրէմին յաջողութեան համար պատասխանատուութեան զգացում պէտք է ունենան եկեղեցի յաճախող այն ըուրր հաւատացեալները, որոնք կը բաղձան զօրավիզ կանգնիլ աստուածահաճոյ այս գործին եւ տեւականացնել քրիստոնէական հաւատքն ու հայկական աւանդութիւնները: Սատար հանդիսանալու այս ձեւը միջոց մըն է մեր եկեղեցւոյ հանդէպ քրիստոնէական հոգածութեամբ, վեհութեամբ եւ բարեխղճութեամբ կատարելու մեր պարտականութիւնը: Նիւթական օժանդակութեան այս ձեւը պէտք է արթնցնէ մեր մէջ պատասխանատուութեան զգացում հանդէպ մեր Սուրբ Եկեղեցւոյն եւ մեր խղճին: Տնտեսութեան փրոկրէմին մէջ ներառեալ է տարեկան անդամատուրը:

Տնտեսութեան փրոկրէմը պիտի փոխարինէ եկեղեցւոյ զանազան կազմակերպութիւններու անցեալին կատարած տենդագին աշխատանքը ի խնդիր առաջադրուած եկամուտի, որով կարելի կ'ըլլար քայլ պահել աւելցող ծախքերուն հետ: Սակայն տարեկան դաշտահանդէսը, պազարը եւ նման ձեռնարկներ, որոնք զրգիւ կը հանդիսանան ընկերային հաւաքներու, պիտի շարունակուին ըստ առաջնոյն:

Յառաջիկայ շաբաթներուն եւս պիտի շարունակենք տեղեկութիւններ տալ ձեզի Տնտեսութեան փրոկրէմի մասին: Եթէ ունիք հարցումներ, որոնք բացատրութեան կը կարօտին, հաճեցէք ներկայացնել զանոնք Տնտեսութեան փրոկրէմի մասին յառաջիկայ Սեպտեմբերին տեղի ունենալիք մասնաւոր անդամական ժողովին:

Աղօթարար եւ յարգանօք
ՄԱՄԲՐԷ ԲԶՆՅ. ԳՈՒԶՈՒԾԱՆ
ԵՒ
ԵՒԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՍԱՌՈՒՄԲ